ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 30.12.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-47/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-47/14 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Քլինլայն» ՍՊԸ-ի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից 23.12.2014թ. բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած սանիտարական մաքրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲԸԾՁԲ-14/82» ծածկագրով բաց ընթացակարգը մինչև վերջնական որոշում կայացնելը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

2. Կասեցնել «ԵՊՀ-ԲԸԾՁԲ-14/82» ծածկագրով բաց ընթացակարգը մինչև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ԳԲԽ-47/14 բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Բողոքը քննող հանձնաժողովի

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամ՝ Ավագ Ավագյան